

**Վիճակագրական տեղեկատվություն
սպառողներին (օգտագործողներին)**

Վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկն ուսումնասիրելու նպատակով, կարծիքի է ներկայացվում [«2018 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի»](#) նախագիծը (այսուհետ՝ **Նախագիծ**)՝ խնդրանքով նշված փաստաթղթի վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների պարագայում, դրանք մինչև սույն թվականի **օգոստոսի 1-ը** ներկայացնել ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը, հետևյալ հասցեներով՝

փոստային հասցեն՝ ք. Երևան, 0010, Հանրապետության պողոտա,
Կառավարության տուն թիվ 3 կամ

էլեկտրոնային հասցեն՝ svod@armstat.am

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված դրույթների, **Նախագիծը** մշակվում է վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը: **Նախագծում** նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները պետք է հաշվի առնեն երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու տեսանկյունով ապահովեն դրանց հնարավոր կայուն պարբերականությունը և տարեկան կտրվածքով պետական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը: